

առաջ և ձեռք՝ մարմնոյս կերակրիչքս բան և ձայն չեղուն շարժողի ... » 1

Սոյնն ասում է և Ս. Ներսէս Շնորհալին՝ «արագէս զլուին միայն առանց բոլոր անձին անդամոց օժանդակութեան ոչ է կարող ներգործութիւնս ինչ կատարել նոյնպէս և մեզ ... » 2

Իսկ ս. Գլխի և իւր որդիներն յարաբերութեան մասին զեղեցիկ որոշումներ է տալիս Պետրոս Գեաղարքի զիտնական բարեկամ Գրիգոր Մաղիստրոսը. նա զրոււմ է իւր թղթերի մէջ. «Թէպէտ և ըստ զեղեցիկ խնդրոյ քումը լուստոյալութեան՝ պէտք է լինէր որդիներն և զիսկ առաջնորդական պարտ վարկանիս երկարագոյն սրագոյն բանս իմաստասիրել ծառայի քումս որով զուարճանաս իրր զհայր ի վերայ որդւոց »:

Գրիգոր Մաղիստրոս որոշում է և Հայրապետի զլուին լինելու որպիսութիւնն ասելով.

«Արդ թողից դայտոսիկ նախագրութիւն մակարել մեծագունից զլուոյ որ անշնչէ քումն և դանդաղան անշնչէ քումն և շնորհ համեմատ սրով բէականն մականունութեան ... »: Կամ

«Արդ դու ո՞վ ամենալուին հաւատոցն Քրիստոսի և վախճան ... » «ով աստուածայինը զլուին »: «փոխան Յիսուսի »: «Յաւեա ծայրացիելոյ բոլոր լրութեան Կաթողիկէ Նկեղեցւոյ՝ մշտափայլ ճառագայթից ըղձամ տոչորել ... »:

Ի հարկէ այս ամենն լոկ զողանջին կղանայ նոյա համար՝ որոնք հաւատք չունին և չորացած են աստուածային շնորհաց համար: Վասնորոյ և նոյն Մաղիստրոս զրոււմ է զիսկ զարար.

«...» Զայտոսիկ հիմն հաւատոց հաստատէ, այլ առ հաւատացեալը Աստուծոյ Բանին է հաւատալ փան զի ի մէջ Քրիստոսատիրացդ է բանդ, որով սպառազինեալ զօրավարդ՝ փառելով վահանաւորեալ անվանող ի նեախն մնալից զաղանի, առեալ աւար տացես մեզ կապուտ և զստարեալք հարցն և ցանկ ամ

բացուցես քոյինդ անքուն ակամբ նոր նորոգեալ ի հաւատ առաւել քան զԱրահա մուն ... »:

Սերեմ Կաթողիկոսը զլուին լինելով իւր հաւատացելոց մէջ բառի բուն նշանակութեամբ անշնչաւ գործ է ածում իւր զգայաբաններն և ինքնիշխանաբար գործում: Իսկ նորա զգայաբանները չեն կարող բնաւ գործել ինչ առանց զլուի նախորդ հրամանին. այդ պէտք է տեսնելք և յետոյ.

(Հարունակելի)

Ա. ՏԵՐԱԴԵԼԵԱՆ.

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԿԱՅԻՆԻ ՊԱՏԱՍԻԱՆԸ.

(ԲԵՐՍԵԷԻՏ)

- Եւ ասէ Տէր Աստուած ցկային. ո՞ր է
- Հաքել եղբայր քո. եւ նա ասէ. չգի-
- տնմ. Միթէ պահապան իցնմ եղբորն
- իմոյ »:

(Ծն. Դ. 9)



դրայրներ. այսօր Դոք լոււմէք առաջին եղբայրապանի խօսքերը: Ո՞րպիսի տարբերութիւն սպանութեան մնալ տեսարանի և աշխարհի ստեղծագործութեան պատմութեան մէջ, որ նրանից համարեայ մի փոքր առաջ միայն ընդառաջել էր: Աշխարհի ստեղծագործութեան մէջ, Աստուածային նախադասմանութեամբ, ըստ ամենայնի նկատելի է խաղաղութիւն, ներդաշնակութիւն, լոյս: Երեւում էր, որ մարդկային ցեղը կմեծանայ և կարգանայ անդաւաճան սիրոյ և համերաշխու-

թեան մէջ, բայց աւագ՝ շրջումեմ այս Լուսաւոր երեսը և սրպիսի խօսքեր եմ կարգում: «Միթէ պաշտպան իցեմ եզրօրն իմոյ»: Եւ այս խօսքերը հնչուում են Արեւի արիւնշաղպախ գիւղի մօտ:

Այն ժամանակից սկսած Կայինի խօսքերը կրկնուեցան բոլոր դարերում համայն աշխարհում Կարելի է ասել, այնտեղ որտեղ Աւետարանի քարոզութիւնը մուտք չէ դրածել, այնտեղ՝ այս խօսքերը կարծես ամբողջ մարդկութեան դրօշակն են կազմել: Ի դուր կլինէր հին Հասարակութեանց մէջ, մարդկանց միասրտեղ կապեր որոնել: Խրաքանչիւր ազգայնութիւն կազմում է առանձին իշխանութիւն, առանձին կրօն: Մինչև անգամ իւրաքանչիւր ժողովրդի աստուածութիւնը հայրենի աշխարհի սահմանից չէ անցնում: Գոտարազդիները բարբարոսներ են համարուում: Կրօնական միութիւն մի հոգի մի հասարակութիւն կազմել: այդ յոյսը այնքան հեռի է հին աշխարհի հոյեացքներից, որ երկրորդ դարում (յոս մեր թուականի) Յելս փիլիսոփան, քրիստոնէութեան յայտնի թշնամին, հեռակապն էր գրում: «Մի միայն կոտորելու և խելացնո՞ւ մարդիկ կհաւատան որ Յայներն ու բարբարոսները: Ասեան ու Եւրոպան Լիվիան (Ափրիկայ) և ուրիշ ազգայնութիւններ, երբ և իցէ կարող են մի և նոյն կրօնի կապերով միանալ: Եւ այն ինչ որ ասում էր Յելսը այնպիսի աներկրացութեամբ ամենքը կրկնում, ընդունում էին, և՛ Հռոմեացիք և Յայները, նաև Հրէաները: Աւելի կամ պակաս նրբացած այս եռա կանուցութիւնից ոչ որ չբարձրացաւ: Խրաքանչիւր ազգութիւն, կարծես ասում էր, «Միթէ պաշտպան իցեմ եզրօրն իմոյ»: Եւ Հռոմը աշխարհը նուաճելով, մարդկանց մատկցում է մի միայն ստրկութեան և աշխարհ ստորութեան կապերով: Մինչև անգամ մի և նոյն ժողովրդի զանազան գաղափարների մէջ, նկատելի է նոյն պագութիւնը, նոյն խորհրդիւնը: Այժմ օրինակ, հնում հոգում է ազգաւոր սարք-

կիւ չունեցի մասին: Թշուառական, ցանկանում էր իմանալ հնումն ինչ էին մտածում նրա մասին: Պղտտոնը այս վրսեմ, բարձր հանձարը, որին շատ անգամ Քրիստոսի նախազուշակող էին անուանում իւր գրքում՝ հասարակապետութեան մասին այսպիսի հորոյ է տալիս: «Հարկաւոր է արդեօք օգնել ազգաւորն, երբ նա հիւանդ է կամ տանջուում է»: Եւ նա ուղղակի հերքում է ազգաւորն օգնելու այն հիման վրայ, որ օգնել ազգաւորն — խեղճին՝ չարժէ: Ստորեկ, ոչ մի հեթանոսական փիլիսոփայ երբէք չէ մտածել նրա վիճակի մասին: Իսկ առհամաշխարհային որրեր, հաշմանգամներ, չունեցողներ, Հնումն, ինչպէս և ցարդ, Չինաստանում ձուլանեցում, Հնդկաստանում և ամեն ուրեք, որտեղ խաչը չէ կանգնել, չկայ ոչ մի հիւանդանոց, ոչ մի աղատանարան որրերի, ծերերի և ազգաւորների համար: Եւ միթէ ես աւելի ասացի, հաստատելով որ մինչև քրիստոնէութեան տարածուելը և նրա ազդեցութիւնից դուրս, մարդս՝ եղբայրասպանի խօսքերից իւր համար գրօշակ կազմելով, ստրկներէ, ազգաւորների բոլոր հառաջանքներին ընդ միշտ պատասխանում էր իւր փիլիսոփաների, օրէնադիրների և քուրմերի բերանով: «Միթէ պաշտպան իցեմ եզրօրն իմոյ»:

Այդպէս և կլերջանար աշխարհը, առաւել և առաւել խորասուզուելով եռականութեան մէջ, եթէ չդար Բեսիան — Քրիստոսը: Դուք, եղբայրներ, գիտէք, ինչ ասաց Աստուծոյ Արդին սաք գնելով անարգութեան փշտ ճանապարհի վերայ, որի ծայրին բարձրանում էր Կառափնաւեղիկ: Դուք լսեցիք Նրան, երբ քարոզում էր Յեթգեհէմում: Նազարէթում: Կեթսեմանի ձորում: Նաև Կոզգոթայի վերայ: Դուք ճանաչում էք Նրան թագաւորաց թագաւորին, որ մեր մարմնոց հետ ընդունեց ազգաւորութեան բոլոր անարգութիւնները: Դուք տեսաք Նրան ճանրաբեռնուած մեր վշակերով, հոգսերով ու նեղութիւններով: Դուք տեսաք Նրան մինչ այն

առտինան միացած յանցաւոր մարդկութեան
հետ որ ընդունեց նրա մեղքի բոլոր ծան-
րութիւնը։ նրա գառապարտութեան բոլոր
արհաւիրքները։ Երբ Փրկիչը խաչի վերայ էր,
գուք լսեցիք այս սքանչելի խօսքերը։ «Ասա-
ւած իմ, Աստուած իմ ընդէր թողեր զիս»
(Մատթ. ԻԵ. 46)։ Այո՛, Նա՛, Սուրբ և Ար-
դար, չարչարուեց մեր անարգարութեան հա-
մար։ խաչը նկատելով, եղեռնագործը սոս-
կաց ի բոլոր սրտէ։ խաչի վերայ յանցաւոր
մարդը ճանաչեց իւր Փրկչին։ խաչեցեալի ա-
րիւնը թափուեցաւ ուրիշ ոչ սքի բայց մեղ
համար միայն։ որի համար և Պողոս առա-
քեալը գրում է։ «Եւ ի նորոց կտակարանաց
միջնորդն Յիսուս և ի հեղումն արեան Նո-
րա՛ որ առաւել խօսի քան զշարեկին» (Եփր.
ԺԲ. 24)։ Արեւի արիւնը յիշեցնում է մեղ
եղբայրասպանի խօսքերը։ «Եթէ պահապան
իցեմ եղբորն իմը»։ Իսկ Յիսուսի արիւնը—
մեր Հովուապետի արիւնն է։ որ մեռաւ ոչ
միայն իւր եղբայրներին այլ և թշնամիների
համար։

Եղբայրներ, մենք մեղ անաւանում ենք
քրիստոնեաներ, սա նշանակում է մենք
պարտաւոր ենք նմանուել Յիսուսին։ հետե-
ւել Նրա վարդապետութեան և կեանքին։
Խաչի պատաւանդանի մօտ մենք սովորում ենք
առել ետականութիւնը և հասկանում ենք որ
չպէտք է ապրել մի միայն մեղ համար։ Քր-
իստոնէական ընդարձակ ընտանիքի անդամ
լինելով, մեր պարտաւորութիւնն է։ որչափ
կներեն մեր պէտքը՝ հոգալ մեր եղբայրների
մօտին։ լինել նրանց պահապան։ Բայց սրտեղ
են մեր եղբայրները։ հարցրէք Յիսուսին
«Եւ ես յորժամ՝ բարձրացայ յերկրէ, զա-
մենեսին ձեզեցից առ իս» (Յով. ԻԲ. 32)։ ա-
սում էր Փրկիչը։ Այո՛, բոլոր մարդկանց, խա-
չի վերայ առաքածաւ։ ձեռքերով Նա ցան-
կանում է ընդ գրկել բոլոր մարդկութիւնը,
ոչ միայն Աբրահամին այլ և Ադամի բոլոր
որդոց։ Դաւէթ զանէ մի հօգի որ Յիսուսը
յեա մղէր, զանէ մէկը՝ որի համար Նրա ար-
իւնը զթափուէր։ Եւ այդպէս ձեր եղբայր-

ները ամեն տեղ են։ Ձեր եղբայրները ոչ մի-
այն նրանք են, որոնք ձեզ սիրում են, այլ և
նրանք՝ որոնք ձեզ ատում են։ ոչ միայն նրանք
են որոնք ձեզ մերձաւոր բարեկամներ են, այլ
և նրանք՝ որոնք ոչինչ յարաբերութեան
կապ չունեն ձեզ հետ։ Դուք, հարուստներ,
հարեան աղքատին ձեզ եղբայր պէտք է
ճանաչէք։ և Դուք խուճարներ, հարուստին
նայեալէս ձեզ եղբայր պէտք է ընդունէք։ գէ-
տի որը—առաւել շուտ նախանձ առեալ-
ութիւն էք տածում քան սէր։ Դուք լուսա-
ւորւած մարդիկ, ամբողջի մարդուն ձեզ
եղբայր պէտք է համարէք։ որի հետ գրե-
թէ ընդհանուր ոչինչ չունէք։ որի լեզուն
հայիւ հազ հասկանում էք։ Բազմաւոր մար-
դիկ ձեզ համար եղբայր պէտք է լինի այն
անբաղգ, թշուառ, անկեալ մարդը որ հար-
կազրուած է փողոցից—փողոց քաշ տալ
մարացկանութեան, ստորութեան մասլ ու
ծանր բեռը։ Մեր եղբայրները մարտաւորնե-
րն են, որոնց հասարակութիւնը մերժում
է և հալածելով հալածում իւր միջից։ Վեր-
ջապէս լուսաւորութեան և քրիստոնէական
եկեղեցիների սահմաններից դուրս մեր եղ-
բայրները կլինին ստրկացրած գերիներն ու
ստրուկները։ որոնց մարդկային ազատ-
ութիւնը գեռ ևս գրկում է իրաւութիւնից, զրո-
կում է մարդկային կոչումից։ Մեր եղբայրները
հեթանոսներն ու կապալաշներն են, որոնց
սովորութիւնները ընդունակ են յեա մղել
մեզ՝ իրանց միայն յատուկ անդթութեամբ
գրանք վայրենիներն են, որոնք ապրում են
Աւարդիայում և ուրիշ աշխարհներում ո-
րոնց առթիւ մի քանի սկեպտիկներ ժպտա-
լով հարցնում են, «արժէ՞ր միթէ որ և է
Պապուսի անմահ հօգի շնորհել»։ Մեր եղ-
բայրները ամեն տեղ են։ Արբ մենք գնում
ենք քարագել բոլոր աշխարհում Աստուածա-
յին զթափարտութիւնը և հրաւիրել Հոր բը-
նակարանը մայրեալ յանցաւորներին, մենք
նրանց բոլորին ասում ենք, ինչպէս ուղարկ-
ուած ծառաները առաւի մէջ, «Եկաք»։
կայ ևս տեղի։ (Վուկ. ԺԳ. 22) Բոլորին

Հրաւիրում ենք Աստուծոյ սիրոյ խնջոյքի մէջ՝ ազգասններին և հարստաններին յառաւորութեաններին և ազէաններին բարեգործներին և յանցաւորներին մինչ այն որք երբ խաւարի ամենաշեւաւոր անկիւններէն՝ վերջինը այդ մարդկանցից տեղ կրճնի իւր ժամանակին այս հոգեւոր սեղանի վերայ։

Այսպէս է՝ եղբայրներս մարգարեութեան գաղափարը որ ներշնչում է մեզ՝ քրիստոնէութիւնը։ Մեր ժամանակում՝ մասնագիտերը և նոյն խել անհաւատները խրաղորդ են այս միտքը և պարծենում են նրանով։ Մեզանում կայ փխխտափայտութիւն որ մարգարեութեան (համարում) փխխտափայտութիւն է կոչուում իրրեւ թէ նա առաջինն էր որ սկսեց հաշիւ մարդկութեան մասին։ Մենք ի հարկէ անձնատուր չենք լինիլ այս մարգարեութեան սրովհետեւ քաջ գիտենք որ մարգարեութեան գաղափարը քրիստոնէութեան գաղափարն է։ Գաղափար՝ որ սկիզբն առաւ առաջին անգամ՝ խաչի պատուանդանի մետ։ Մարդկութիւնը միայն այն օրումնից հասկացաւ որ նա կապում է մի բնականը երբ մեր հովիւը մեռաւ խաչի վերայ՝ որ ի մի ժողովէ զրուած։ Մարգարեւն ոչխարներին։

Այսպէս մենք պաշտպաններ ենք մեր եղբայրներին։ Նրանց շահերը մեր շահերն են։ Ահա բնականորէն ճանարտութիւնը որ յիշեցնում է՝ ձեզ, եղբայրներս։ Բայց այս պարտականութիւնը որ գրուած է մեզ իւրաքանչիւրիս վերայ՝ պարտականութիւն պահապան լինել մեր եղբայրներին՝ երկու տեսակի են։ Երանցով և մենք կգրադուենք։ Մարդս բողկանում է երկու մասից — մարմնաց և հոգաց։ Նա տանջուում է մարմնացէս տանջուում է և հոգեպէս։ Արանից ծնանում է մեզ համար երկու առաքելութիւն։ մենք հրաւիրուած ենք սիրովի մարդկային ժամանակաւոր թշուառութիւնները և մի և նոյն ժամանակ փրկել հոգիները։ Այս կրկնակի առաքելութեան առաջ մենք բոլորս գուցէ մի անգամ չլինենք առաջ։ Միթէ պահապան իցեմ՝ եղբորն ինչո՞ւ։

Ահա և թէ այս և թէ այն տանջանքներն հանդիպեց, որանց մասին ես այս րոպէս յիշեցի։ Ցեաններս ինչպէս էր վերաբերուում դէպի նրանց։ Ասիւ և առաջ՝ Փրկիչը հանդիպեց մարմնական երկու տեսակ շարժարաններին՝ որ ամենից՝ շատ աւարածուած էր մարդկանց մէջ։ Դա հիւանդութիւնն աւազաւորութիւնն է։ Աւառարանը ծանուցանում է թէ ինչ էր անում։ Քրիստոսը այս շարժարանները թիկեւացնելու համար։ Մենք բնի միշտ տեսնում ենք նրան հիւանդներով և ազգասններով շրջապատուած։ Ասիւ թէ կարելի է այսպէս աւելի մի համարակութիւն էր որին Փրկիչը առաւելապէս մնա էր։ Նրանց համար հրաշագործութիւններ էր անում։ Այնպիսիք թէ ինչպէս այս թրջառատները վազում էին։ Արա մտաւ Աթէ ցանկանում էր իմանալ որտեղ է գտնուում Քրիստոսը։ Բաւական է միայն նայիլ թէ ուր են գնում խեղճերը՝ որովհետեւ Արա յայանուելուց առաջ արդէն նրանց ազատները հրաւիրում են Արան։ Արանց ազատկը, սոխաննա՝ որդի Աստիւ սոխաննա՝ ամբողջ Արաւաղէմը գորդեցրեց և տնի կանգնեցրեց հանդիսաւոր կերպով բնի առաջ երթալու։ Ահա եւ որ ամբարի ազատակների մէջ ինքնաշահաւորութեան ձայն էր։ Հիշուում որ Քրիստոսի մէջ սգնութեան ձեռք էր որանում։ ձեռք որ նրանց կերակրում մխթարում էր։ Ահադ հենց այս խեղճերը ոչ միայն կխոստանին Արանից, այլ գուցէ և կմտախոսեն։ Աստիւաղէս հենց այդ պատճառաւ Արա սէրը ներկայանում է առաւել ևս որանելի։ Գտեմ և Աստուծոյն։ Արախի բերդը իմամբով հոգում է նրանց մասին։ Արանից է իւր համար աշակերտները բնութեւն։ Առանց աշագործութիւն գործնելու երկրային փառքի։ Ցիւրերիսի։ Ահա քի մեծութեան վերայ։ Աստիւաղէսն է որ և է։ Ազատի որ և է։ Մարիամ։ Մագթաղինացուաններս ազատուցանելու համար թէ ինչ է արել ազգասնների հարստահարուածների և անձան մարդկանց համար։ Փրկիչը ճշն

առաջ է աղքատների մէջ: ապրում մեծանում է նրանց հետ: Բացէք Աւետարանի որ երեսոր կամենաք, դուք ամենայն տեղ Քրիստոսի անունը կապում կգտնէք աղքատի անուն հետ: Բայց ահա առաւել սքանչելի գիծ: որի մասին ես ընդ միշտ մտաբերում եմ մի առանձին հրճումնաբով: այդ այն է իսկապէս որ Փրկիչը աղքատների և հիւանդների մասին իւր հոգացողութիւնը, սրանցից անբաժան մնաց իւր երկրային կեանքի բոլոր ընթացքում: իւր հետ յախճանակամութիւնը տարաւ: Քրիստոսը զանկանում է ընդ միշտ միտաբերում լինել աղքատների և հիւանդների հետ: Թողնելով երկիրը, Նա նրանց ընտրեց իւր ներկայացուցիչներ և նրանց հետ կրկին յախճան երկրում:

Արարի մոտ՝ պատկեր է ներկայացնում մեզ Մատթէոս Աւետարանիչը նկարագրելով ահեղ գաղատանքը: «Այս յորժամ՝ եկեացել Որդի մարդոց փառք իւրովք՝ և ամենայն հրեշտակք ընդ նմա յայնժամ՝ նստցի յաթոս փառաց իւրոց: Այս ժողովեացին առաջի նորա ամենայն ազգք, և մեկնեացէլ զնոսա ի միմեանց, որպէս հովիւ զի մեկնեացէլ զոգիս յայժեաց:» (Մատթ. Խ. 31—32) Այս հանդիսաւոր ժամում Փրկիչը որպիսի խօսքերով կգառնայ նրանց, որանք իւր Հօր ասն մէջ կընդունուին որպէս որհրումներ և որանց կմտցնի իւր փառքի մէջ: Նա կարող էր նրանց ասել: «Աս ձեր տէրն էի և դուք ծառայեցիք ինձ: Աս ձեր թագաւորն էի և դուք հնազանդուեցիք: Աս ձեր Աստուածն էի և դուք ինձ երկրպագութիւն տուիք: Բայց և այնպէս Նա չի ասել այնչափ իւր թագաւորութեան, ոչ իւր փառքի և ոչ նաեւ իւր Աստուածային արժանաւորութեան մասին: Նա նրանց միմիայն կասի: «Այս աղքատ էի: և հիւանդ էի: և մերկ էի: և բանաւումն էի: և Ահա Աստուծոյ Որդւոյ թագաւորաց թագաւորի գլխաւոր կոչումը: «Այս աղքատ էի: հիւանդ էի և դուք ինձ սպցելութեան եկայք, կերակրեցիք և հացորբիք: Այրացիներ՝ հասկանում էք դուք թէ

ինչ է պարունակում այս խօսքերի մէջ: Ըստ իս երանի թէ Աւետարանից միմիայն այս հասկանալի տիրապետիւ ըմբռնելիս Ասկանայէի Աստուծոյն, որի անունը սէր է և կասէի: «Այս, Յէր իմ և Աստուած իմ: Այսպէս նայեցէք՝ ինչ է հեռեւում այս բարձր փարդապետութիւնից: Ասորք եկեղեցին ընդ միշտ աղքատին բնգունել է Քրիստոսի ներկայացուցիչ: Այս ահա առաջինը: Բայց մենք անմասմենք այս հրաշալի տեսարանը Արտապղծի եկեղեցու մէջ: որտեղ աշխատում են ոչնչացնել մնաւի գաղափար: գութեան տարրերութիւնը: ոչ մի քրիստոնէի չմտնելով կարծաւթեան մէջ: Նայն սէրը գէպի աղքատները երեւան է գալիս առաքելոց թղթերում: Արք Պօղոս առաքելայր, բարոյութեան ուղեւորուելուց առաջ, գիտում է առաքելների եղբայրական խորհրդին և ճանապարհի հոգալիքների մասին: նրանք խորհուրդ են տալիս նրան մտաբերել միմիայն աղքատներին: Այս իրար աղքատները ընդ միշտ հոգս են պատճառում նրան: նրա ճանապարհորդութեան վառնգների և հետադարձ աշխատանքների մէջ:

Ամենայն տեղ, որտեղ Աւետարանը քարոզում էին, ինքն ըստ ինքեան աղքատեակ հոգատարութեան պահանջ էր դարձնում: Այս փեսասում, որտեղ Յովհաննէս առաքելայր գրեց այս գերազանց խօսքերը: «Աստուած սէր է:» (Յովհ. Գ. 8): «Հիմնուեցաւ առաջին հիւանդանոցը: Մի փոքր ժամանակից յետոյ՝ հիւանդանոցին հետեւեց որբերի համար առաջին աղատամարանի բացումը: Դերիները առաջին անգամ եղբայր անունն են ասանում: Վերջապէս շնայելով մաւրի ծածկոյցին որ գլուխ են քրիստոնէութեան վերայ և ուրի տակ աշխատում են խեղդել նրա հոգը: Զայն, ամեն տեղ նա յիշեցնում է մարդու, որ նրա եղբայրների շարքորանքները իւր սեղանակամն են և որ ոչ որ իրաւունք չունի սահմանափակել իւր մասին ետական հոգաւորութիւնը մերձաւորի շարքորանքները տեսնելով:

Դուք, ի հարկէ, լսած կլինէք այն ճառերի մասին, որոնցով ամենապերճախօս հասարակական Հռօմէական հռետոր Կիկերոնը, զգրգեցնում սոսկում էր պատճառում իւր ունկնդիրներին, պատմելով, օրինակ, որ և է հայրենակցի կրած վերաւորանքի մասին և չռետորը մասնանիչ էր անում այն մարմնական պատժի վերայ, որին համարձակուել էր ենթարկել որ և է դատաւոր նրանց հայրենակիցներից մէկին, անուշագիր թողնելով զսհի բողոքը. «Ես Հռօմի քաղաքացի եմ»։ Մի միայն այս խօսքերը, որ կրկնում էր Կիկերոնը Հռօմէական հրապարակի վերայ, բաւական էին յաղթանակը տանել, որովհետեւ «Ես Հռօմի քաղաքացի եմ» խօսքերը ամեն տեղ զիւթիչ, արտասովոր ներգործութիւն ունէին։ Անմերձեանալի անձնաւորութիւն էին զարձնում նրան, ով որ արտասանում էր այդ խօսքերը, յիշեցնելով իւրաքանչիւրին յախտնական քաղաքի մեծութեան մասին, որ իւր պաշտպանութեան տակ առնելով իւր համարադարացիներին, ցոյց էր տալիս նրանց իւր կատարեալ հովանաւորութիւնը, որի հետ ոչինչ բան հաւատարուել չէր կարող։ Ի հարկէ, քաղաքական կատարեալ երաշխաւորութեան այս զգացմունքի մէջ կար մի ինչ որ բարձր, արտաշարժ բան, բայց եթէ խորը մտածենք այս զգացմունքի մասին, կնկատենք որ նրա իսկական յենակէտը տիրապետող ժողովրդի հպարտութիւնն էր, որ պատերազմ էր յայտնում ամենամաննշան շարժառիթներից զրգուած և բոլոր հպատակ ազգերին սարսափ էր ազգում, երկիւղ էր ներշնչում։ Հռօմի քաղաքակիցները երբէք համակրութեամբ չէին վերաբերուել Կիկերոնի խօսքերին, եթէ նա պատմէր ոչ Հռօմացիու, այլ որ և է Յոյնի, բարբարոսի կամ ստրկի մասին։

Այժմ հարցնում եմ, կարող ենք մենք քրիստոնեաներս մեր սիրտը ներշնչել այս նեղ, ազգայնական շրջանակի մէջ, երբ մեզ պատահում է վիայ լինել որ և է անարգարութեան, նախ և առաջ ի՞նչ բանն մեր հո-

գին ալեկոծում քաղաքացու, թէ մարդու չարչարանքները, եւ այսպէս, որտեղից, եթէ ոչ քրիստոնէութիւնից կարող է ծագումն առնել այն համաշխարհային սէրը, որին ոչինչ բան չէ կարող կանգնեցնել։ Ինչո՞ւ դուք տեսնում էք մեր օրերում քրիստոնէական ժողովուրդների մէջ այս կենսատու և ընդ միշտ վերանորոգուող մասնակցութիւնը նեղասակիրների վիճակին։ Ինչո՞ւ այս մասնակցութեան հետ կապող պարտականութիւնները, մեզ վերայ այնպես են դրուում, որ մենք անկարող ենք թոթափել մեզանից։ Ինչո՞ւ այս վերաբերմամբ ժամանակակից աշխարհահայեցողութիւնը և զգացմունքները այնչափ տարբերում են հնրից, ինչո՞ւ եղբայրասպանի խօսքերը, «Մի՛թէ պահապան իցեմ եղբօրն իմոյ», այժմ չեն բնգունում օրինակելի, ինչպէս հասարակական և քաղաքական հարցերում այնպէս նախնականք ընտանեկան յարաբերութեանց մէջ։ Ինչո՞ւ մեր օրերում կատարեալ երաշխաւորութեան զգացմունքը առաւել և առաւել զարգանում է և սակայն մեզ խօստովանել որ մարդկութեան վերաբերմամբ մեզ ոչինչ բան օտար չլիարք է լինի։ Արովհետեւ Աւետարանը տարածուեցաւ, որովհետեւ նա երկրի ալն է։ Ես գիտեմ, դուք ինձ կասէք, որ նա ընդ միշտ երկրի ալը չէ, դուք ցոյց կը տաք զանազանատեսակ անարգարութիւններ, որոնք քրիստոնէութեան պատրուակով կատարուում են հեթանոսների վերայ, որոնց հարստահարում, ճնշում են քրիստոնեաները, մասնանիչ կանէք ստրուկների վերայ, որոնք շղթայուած են թէ ստրկութեան և թէ քրիստոնէական համայնքների մէջ։ Բայց նոյն իսկ յօգուտ քրիստոնէութեան չէ՞ խօսում արդեօք այն իրական տաւառութիւնը, որ այս փաստերն են առաջացնում։ Արտեղից կարող էր ծագել այն ակամայ զրգոհութիւնը, որ սկեպտիկներին անգամ բուրում մալորեցնում է այս փաստերի ժամանակ։ Արդեօք նրանք անբաւական կմնային նոյնպէս, եթէ այս տեսակ եղեռնա-

գործութիւնները կատարուէին ուրիշ կրօնի յարկի տակ: Ի հարկէ ո՛չ, որովհետեւ նրանց վրդովում է առաւելապէս այն հանգամանքը, որ այդ կատարումն քրիստոնէակաները, Նրա՛նք զգում են որ Աւետարանի ոգւոյն կատարելապէս հակասում են այս եղեւնագործութիւնները. հետեւաբար ստութեամբ արգարացնելով այս օրինակ եղեւնագործութիւնները նրա անունով, նշանակում է լուսանք թափել, չարախօսել Աւետարանի վերայ: Եւ այսպէս իրական դժգոհութիւնը որ ծառայում է ինձ որպէս պատասխան վկայում է, որ Աւետարանը անմեղ է այն չարութեան մէջ որ յաճախակի կատարուում է Նրա անունով, որ նա ամենալուսապատանաւորն է բոլոր նեղօտկիրների համար և որ, վերջապէս մարդկութիւնը հետեւել է Նրա հրաւերին: Որը ասաց. «Եկա՛յք առ իս ամենայն վաստակեալք և բեռնաւորք և ես հանգուցից զձեզ»: (Մատթ. ԺԱ. 28) Եղբայրներ, երբ անհաւատ — նկատում է անարգարութիւններ, որոնք կատարուում են այն աշխարհներում որտեղ Աւետարանի քարոզութիւնը մուտք է գործել, յայթանակը տարած քայտականչում է. «Որեմն ի՞նչ բանի է արդեօք ծառայում ձեր կրօնը»: Բայց ես կասեմ որ ի ներկայութեան այս փաստերի հարկաւոր է բնդհակառակ կրկնել մի հաճաքեղ մտածողի (Յրանկիլին) խօսքերը. «Եթէ մարդիկ քրիստոնէական կրօնը դաւանելով այդ չափ փառ են, հապա ի՞նչպէս կրկնեն նրանք առանց նրան»: Այո՛, ի՞նչ կպատահէր նրանց հետ առանց այս Աւետարանի, որին նրանք մեղադրում են: Ի՞նչ դրութեան էր աշխարհը մինչև Փրկիչը, և ինչի՞ նման կլինէր առանց Նրան, առանց այս Աւետարանի որ լուսաւորում տարացնում է ամենափոքր արարածներն անգամ: Այն դորհուրելի խաւարը, որ առանց նրան կծածկէր երկիրը, ձեզ կհշտկացնէր, թէ և շատ ուշ, թէ ինչ մեծ բարիքից դուք զրկուեցիք:

Աւերջը միւս համարում.

Թարգմ. ԽՈՐԷՆ ՔԸԼ. ԽԱՆԶԱԴԵԼՆԵՑ

ԱՒԵՏԱՐԱՆԻ ՉԱՅՆՐ:

«Ոչխարց իմ ձայնի իմում լսեն, եւ ես ծանալեմ զնոսա, եւ զկնի իմ զան: Եւ ես տամ նոցա զկեանս յաիտնականս: Եւ մի կորիցն յաիտնան եւ մի՛ որ յափշտակեցէ զնոսա ի ձեռաց իմաց»: Ամէն. ԺԸ, 27:

(ՔԸԸԸ).



Ո՞րքա՛ն ամենամօտիկ սիրելիներն իւր ոչխարներն են. ոչխարների ամենասիրելին իւրեանց հովիւն է: Բաւական է հովուի մի ձայնը, որ ժողովուրն իսկոյն բոլոր ոչխարները, մինչդեռ օտարի ձայնը երբէք նոցա չէ զբաւում: Հովիւը համարձակ մանում է իւր ոչխարների փարախը, ա՛նուն անուն կանչում է նոցա և տանում է արածելու. բոլորն էլ հետեւում են նորա ձայնին: Նորա տարած տեղերում արածում են և երբ վերադառնալով, հետեւում են նրան զէպի մակադատեղին կամ զէպի փարախը: Ստարը զողի պէս է մանում փարախը և զողի ձայնը խրանեցնում է ոչխարներին. իսկ եթէ օտարը ջանայ նմանեցնել իւր ձայնը հովուի ձայնին, անյաջող կլինի և չի կարող ոչխարների մշտական վատահալութիւնը գանել: Հարազատ հովուի ձայնն է միայն նոցա առաջնորդը և հաւատարիմ ոչխարներն են հովուի ձայնին հետեւողները:

Մեր հովիւն էլ Քրիստոսն է և մենք՝ Նորա ոչխարներն ենք. հազար ձայների մէջ Քրիստոսի ձայնը մօտիկ է մեր սրտին: Հազար բարեկամների մխիթարող խօսքերից քաղցր և անոյշ է Քրիստոսի ձայնը. հազարաւոր ծանօթների օգնութիւններից և դարմաններից առաւել կազդուրիչ և դորացնող է Քրիստոսի ձայնը: Մենք՝ Նորա ձայնը լսելով՝ պէտք է հե-